ՋՈՒԶԵՊՊԵ ՄԱՑՑԻՆԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ «ՄՇԱԿ» ԹԵՐԹՈՒՄ

ՀՏԴ 94 (495)+070

Մովսիսյան Ֆելիքս
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՎՊՀ պատմության ամբիոնի վարիչ
Վանաձոր, Հայաստանի Հանրապետություն
*felmov@mail.ru**

Իտալական Ռիսորջիմենտոյի կարկառուն դեմքերից մեկը իրավամբ՝ քաղաքական գործիչ, հրապարակախոս, գրող, փիլիսոփա և մեծ հայրենասեր Զուզեպպե Մացցինին է: Նա ջերմորեն սիրում էր իր հայրենիքը, որի անկախության ու ազատության համար պայքարին նվիրեց իր գիտակցական ողջ կյանքը: Զ. Մացցինին, երիտասարդ տարիքից անդամագրվելով իտալական ազգային-ազատագրական շարժմանը իր հետ բերեց ոչ միայն նոր գաղափարներ, հոգևոր հզոր որակներ ու բազմազանություն: Նա անձնական օրինակով ցույց տվեց իր անսահման նվիրվածությունը հայրենիքին, որի միավորման համար պայքարում պատրաստ էր ամենամեծ զոհաբերության: Այդ հատկանիշները հանրապետական Զ. Մացցինիին իր հայրենակիցների աչքերում դարձրին ազգային զգացմունքների ազնվագույն մարմնավորում: Քաղաքական գործունեությունում հայրենիքն ազատագրելու Զ. Մացցինիի ծրագրերը, թեպետ քանիցս փոխվեցին և անհաջողություն կրեցին, բայց նա շարունակեց անմնացորդ նվիրումով պայքարել իր նպատակի համար:

Զ. Մացցինի քաղաքական գործչի այս որակները ժամանակին նկատել և բացահայտել է արևելահայ լիբերալ հոսանքի առաջատար «Մշակ» թերթը: Պարբերականի հիմնադիր խմբագիր, հայ ազատականության ժամանակի պատգամախոս ու առաջամարտիկ Գրիգոր Արծրունին Զ. Մացցինիին համարում է երևելի հանրապետական, ժողովրդական հանճար, մեծ հայրենասեր, եռանդուն քաղաքական գործիչ, իր համոզմունքներին նվիրված մարդ: Նրա կարծիքով՝ Զ. Մացցինիի հիմնած «Երիտասարդ Իտալիա» գաղտնի կազմակերպությունը կազմեց հայրենիքի ազատագրման ծրագիր և բազմաթիվ զոհաբերությունների, դժվարությունների ու անհաջողությունների գնով մինչև վերջ պայքարեց Իտալիայի միավորման համար:

«Մշակի» բնութագրմամբ՝ Զ. Մացցինին թեպետ իր ստեղծագործություններով ու անմնացորդ նվիրումով անմիջականորեն չհասավ Իտալիայի միավորմանը, բայց նրա գործն ու պայքարն անհետևանք չմնացին: Թերթի համոզմամբ՝ անկարելի է հերքել այն մեծ ազդեցությունը, որ Զ. Մացցինին ունեցավ՝ հարուցելով իր հայրենիքի մեջ ազգասիրական զգացմունքը և դրդեց երիտասարդությանը դեպի զոհաբերություններ:

* Հոդվածը ներկայացվել 29.08.2022:
Տպագրության է երաշխավորել Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնը: 5.09.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 13.09.2022:

Բանալի բառեր՝ Իտալիա, Ռիսորջիմենտո, Ջ. Մացցինի, կարբոնար, «Երիտասարդ Իտալիա», ազատագրություն, պայքար, հայրենիք, միավորում:

Ներածություն

1815-1820թթ. Ավստրական կայսրության տիրապետության տակ գտնվող իտալական պետություններում ազգային-ազատագրական շարժում ծավալվեց, որը գլխավորեցին գաղտնի ընկերություններն ու դավադրական կազմակերպությունները: Մասնավորապես՝ կարբոնարների գաղտնի ընկերությունների[1] նախաձեռնությամբ և գլխավորությամբ 1820-1821թ. ազատագրական պայքար ծավալվեց Նեապոլում և Պիեմոնտում, իսկ 1831թ.՝ Կենտրոնական Իտալիայում, որոնք ավարտվեցին պարտությամբ: Կարբոնարների ընկերության անդամների մեծ մասի մեկուսացումը բարձրագույն նպատակի խիստ գաղտնիությունից առաջ բերեց խոր անջրպետ ընկերության վերջնական նպատակի ու ամենօրյա գործունեության միջև, որը հակված էր քաղաքական հարմարվողականության: Այս իմաստով կարբոնարների ընկերությունները խոչնդոտ դարձան դեմոկրատական զարգացման համար[2]:

Կարբոնարների պարտությունը և իտալական վտարանդիության քաղաքական տրամադրությունների փոփոխությունը պարարտ հող ստեղծեցին իտալական ազգային-ազատագրական շարժման մեջ էական շրջադարձ կատարելու համար, որն անխզելիորեն կապված է իտալացի մեծ հայրենասեր, հեղափոխական, հրապարակախոս, գրող և փիլիսոփա Ջուզեպպե Մացցինիի անվան հետ: Նրա հիմնած «Երիտասարդ Իտալիա» ընդհատակյա հեղափոխական կազմակերպությունը նպատակ էր հետապնդում դառնալ միասնական, համաիտալական, հեղափոխական կազմակերպություն, համախմբել բոլոր գաղտնի ընկերությունները և միասնական ուժերով պայքարել Իտալիայի ազատության ու անկախության համար: Այդ պայքարին Ջ. Մացցինին նվիրեց ավելի քան 40 տարի, անցավ բազմաթիվ փորձությունների, հալածանքների, բանտարկության ու վտարանդիության, միմյանց հաջորդող անհաջողությունների ճանապարհով, բայց երբեք չհուսահատվեց ու մաքառեց մինչև իր կյանքի վերջին օրերը:

---

[1] Կարբոնարներ՝ (իտալերեն carbonaro՝ ածխահատ բառից) խիստ գաղտնի ընկերության անդամներ 1807-1832թթ. իտալական պետություններում: Պատմագրությունում առավել շատ տարածված վարկածի համաձայն՝ ընկերության անվանումը կապված է այն բանի հետ, որ Կարբոնարների ընկերությունում, ի թիվս այլ ծեսերի, կատարվում էր փայտե ածխի այրման արարողություն: Դա խորհրդանշում էր կարբոնարական վենտային (իտալերեն և իսպաներեն՝venta, ֆրանսերեն՝ venete՝ օղակ, բջիջ) անդամագրվողի հոգևոր մաքրվելը: Այդ պատճառով կարբոնարների ընկերության դրոշի գույները հիշեցնում էին կրակի՝ սև, կապույտ և կարմիր գույները: Կարբոնարների ընկերություններն իտալական պետությունում ակտիվացան հատկապես՝ 1818թ. հետո, երբ իտալացի հեղափոխական Ֆիլիպո Բուոնարոտտին միավորեց «Ադելֆների» և «Ֆիլադելֆների» ընկերությունները «Բարձրապատիվ վարպետների ընկերությունում» և Իտալիայով մեկ ստեղծեց վենտաների մեծ ցանց՝ 200-220 հազար անդամներով: Կարբոնարների ընկերության կառուցվածքը հիմնականում կրկնօրինակում էր մասոնական օթյակների աստիճանակարգերի բավական բարդ արարողակարգերով ու խորհրդանիշներով: Այս մասին մանրամասն տե՛ս Ковальская М. Движение карбонариев в Италии. Москва, 1977; История Италии. Под ред. Мизиано К. Ф. Москва, 1970, т. 2, с. 86-122:

[2] Берти Д. Россия и итальянские государства в период Рисорджименто. Пер. с ит, Москва, 1959, с. 416.

Զ. Մացցինիի կյանքն ու գործունեությունը, նրա քաղաքական պայքարի ոդիսականը պատշաճ ուսումնասիրված չէ հայ հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմությունում: Չնայած ժամանակի հայ պարբերական մամուլը լուսաբանել է Զ. Մացցինիի քաղաքական պայքարը և որոշակի դիրքորոշում դրսևորել նրա անձի ու գործունեության նկատմամբ, այնուհանդերձ, դա չի արժանացել հայ պատմագրության ուշադրությանը: Այս իմաստով բավական ուշագրավ է Զ. Մացցինիին նվիրված արևելահայ լիբերալ հոսանքի առաջատար «Մշակ» թերթի հրապարակումը: Թերթի հրապարակիչ խմբագիր Գրիգոր Արծրունին մեծ իտալացու մահվան կապակցությամբ տպագրած հոդվածում բավական սթափ, անաչառ ու անկողմնակալ գնահատական է տալիս իտալական Ռիսորջիմենտոյի կարկառուն գործչին: Թերթը նշում է, որ Իտալիայում գործում է հանրապետական ազդեցիկ կուսակցություն, որի շարքերում «ամենից շուտ հասունացավ Իտալիայի միության գաղափարը և այդ կուսակցությունից դուրս եկան ամենաեռանդուն գործիչներ հայրենիքի անկախության համար»[1]: «Մշակի» կարծիքով՝ այդ կուսակցության երևելի գործիչների թվում առանձնանում է «երկու փառավոր անուն՝ Մացցինի և Գարիբալդի, որոնք իտալացիների սրտերում անջնջելի կերպով դրոշմվեցին»:

Զուզեպպե Մացցինիի ազատագրական պայքարը

«Մշակը» Զուզեպպե Մացցինին անդրադառնում է նրա մահվան լուրն ստանալուն պես: Թերթը գրում է, որ 1872թ. մարտին, Պիզա քաղաքում, իր մահկանացուն է կնքել «երևելի հասարակապետական իտալացի Մացցինին[2]» : Թերթն իրավացիորեն Զ.Մացցինիին անվանում է երևելի հանրապետական, որն, իրավամբ, XIX դարի Իտալիայի պատմության ամենապայծառ, ինտելեկտուալ, բարդ, շատ հարցերում հակասական գործիչներից մեկն էր: Նրա քաղաքական հայացքները, հեղափոխական բուռն գործունեությունը, հայրենիքի անկախության համար պայքարում ձեռք բերած հաջողություններն ու ցավալի ձախողումները խոր հետք թողեցին իտալական հայրենասերների մի քանի սերունդների վրա: Այս իրողությունից ելնելով՝ «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին կարևորում է թերթի ընթերցողներին Զ. Մացցինիի կենսագրությանը ծանոթացնելը, որպեսզի նրանք տեղեկացված լինեն անվանի հեղափոխական գործչի, գրողի և փիլիսոփայի անցած ճանապարհին ու քաղաքական գործունեությանը:

Թերթի տեղեկություններով՝ նա ծնվել է 1805թ. հունիսի 22-ին, Զենովա քաղաքում, բժշկի ընտանիքում, ով «քաղաքական համոզմունքներով պատկանում էր ժողովրդապետական կուսակցությանը»: Թերթն իրավացի է. Զուզեպպեի հայրը՝ բժիշկ Զակոմո Մացցինին, Լիգուրիայի հանրապետության քաղաքական գործիչներից էր և երիտասարդ տարիներին մասնակցում էր հայրենիքի անկախության ու ազատության համար շարժմանը: Հետագայում, հեռանալով շարժումից, նա Զենովայի համալսարանի անատոմիայի պրոֆեսոր էր: Նրա տանը հաճախ հավաքվում էին երիտասարդական տարիների պայքարի ընկերները, որոնց պատմություններն ընդմիշտ մնացին դյուրազգաց, հուզավառության նկատմամբ հակում ունեցող, պարփակված, մելանխոլիկ բնավորություն ունեցող պատանի Զուզեպպեի հիշողություններում: Իր հուշերում

[1] «Մշակ», 1882, 24 հունիսի № 112, էջ 2:
[2] «Մշակ», 1872, 16 մարտի, № 11, էջ 3:

Ջ. Մացցինին գրում է, որ իր վրա խոր տպավորություն թողեցին հատկապես՝ 1821թ. Պիեմոնտի ապստամբության մասնակիցները, որոնք Ջենովայի նավահանգստում օգնություն էին խնդրում Իսպանիա մեկնելու համար, որտեղ հեղափոխական պայքար էր գնում: «Այդ պահին առաջին միտքը, որ կարելի է և պետք է պայքարել հայրենիքի համար,- գրում է Ջ. Մացցինին,- թույլ առկայծեց իմ գիտակցությունում, որպեսզի երբեք ինձ չլքի: Այդ վտարանդիների կերպարը հետապնդում էր ինձ, որտեղ լինեի, տեսնում էի երազում: Ես չգիտեմ, թե ինչ կարող էի տալ, որպեսզի գնամ նրանց հետևից[1]»: Հայրենիքի ազատագրության գործին անդամագրվելու մտադրությամբ երիտասարդ Ջ.Մացցինին իրեն նվիրեց իրավաբանությանը և կրթություն ստացավ Ջենովայի համալսարանում:

Պատմելով այս մասին՝ «Մշակը» գրում է, որ այդ տարիներին Իտալիան մասնատված էր մի քանի մասի: Լոմբարդիան ու Վենետիկը պատկանում էին Ավստրիային, որի ազդեցության տակ էին Տոսկանայի և Պարմայի դքսությունները: Հռոմում իշխում էր մոլի կաթոլիկ կղերականությունը, որը ձգտում էր Քահանայապետին պատկանող երկիրը «շրջապատել մի անհաղթահարելի չինական պատով, ամեն մտավոր շարժման դեմ»: Պիեմոնտի թագավորությունը գտնվում էր Կառլ Ֆելիքս թագավորի կառավարության տակ, որին ժողովուրդն անվանում էր «Կառլ գազան»: Թերթի բնութագրմամբ՝ թագավորը նվիրված էր «հեշտասիրությանն ու անգործությանը»: Զվարճությունների, կանանց ու թատրոնի հետևից ընկած թագավորը հաճախ կրկնում էր իր սիրած խոսքը. «Ես նրա համար չեմ թագավոր, որ չարչարվեմ ժողովրդիս համար»: «Մշակի» դիտարկմամբ՝ երիտասարդությունը թուլացած էր, բարոյական ուժ չուներ, ամեն տեղ տիրում էին բռնություններ, իտալական դասական ստեղծագործություններն արգելված էին, նոր գրականությունը սաստիկ գրաքննության էր ենթարկվում: Երկրի արդյունաբերությունը տուժում էր բարձր մաքսատուրքերից, առևտուրը լուրջ արգելքներ ուներ: Բավական հավաստի ներկայացնելով 1820-ական թթ. իտալական պետությունների ներքին վիճակը՝[2] «Մշակը» գրում է, որ Ջ. Մացցինին համալսարան մտավ, երբ իր հայրենիքը գտնվում էր այսպիսի ծանր դրության մեջ: Ուսումնառության տարիներին նա «հրապուրվեց իր հայրենիքի միության և օտար լծից ազատագրվելու ցնորքով»: Այն ժամանակ այդ գաղափարը դեռևս ցնորք էր[3]» :

«Մշակը» 1820-ական թվականների վերջին Իտալիան ազատագրելու Ջ. Մացցինիի մտադրությունը «ցնորք» է անվանում այն պատճառով, որ 1820-1821թթ,. Նեապոլում և Պիեմոնտում ազգային պայքարի պարտությունից հետո, իտալական պետություններում արյունահեղ հաշվեհարդարի և բռնությունների ալիք էր տարածվել: Բացի այդ, չկար որևէ քաղաքական կազմակերպություն, որն Իտալիան ազատագրելու ծրագիր ունենար[4]:

«Մշակի» տեղեկություններով՝ Ջ. Մացցինին դարձավ մի ուսանողական ընկերության անդամ, սկսեց աշխատակցել տեղական մամուլին, գրեց մի քանի քննադա-

---

[1] Кирова К.Э. Жизнь Джузеппе Мадзини. Москва, 1981, с. 7.

[2] Տե՛ս История Италии, т. 2, с. 79-84; История XIX века, т. 3, с. 492-495.

[3] «Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3:

[4] Տե՛ս История Италии, т. 2, с. 116-119; История XIX века. Под ред. Лависса и Рамбо. Пер. с. фр., Москва,1938, т. 3, с. 500, 504-505.

տական հոդվածներ, որոնք տպագրվեցին հիմնականում «Indicatore Genovese» լրագրում: Երբ այդ լրագիրը փակվեց՝ նա թղթակցեց «Subalpino» և «Antologia» թերթերին: Ըստ «Մշակի»՝ Ջ.Մացցինիի թղթակցությունների թվում շատերի ուշադրությունը գրավեց հատկապես՝ «Դանթեի հայրենասիրությունը» («Dell'amor patrio di Dante») էսսեն[1]:

1827թ. ավարտելով Ջենովայի համալսարանը, Ջ. Մացցինին որոշ ժամանակ զբաղվեց գրական գործունեությամբ և, որպես գրական քննադատ, աշխատակցեց Ջենովայի, Լիվոռնոյի ու Ֆլորենցիայի ամսագրերին: Իր հոդվածներում երիտասարդ Ջ. Մացցինին հանդես էր գալիս նոր դեմոկրատական գրականության օգտին: Նա պնդում էր, որ այդպիսի գրականություն ունենալու համար անհրաժեշտ է բոլոր իտալացիների միավորումը միասնական ազգի մեջ[2]: Երիտասարդ լրագրող Ջ. Մացցինիի գրական առաջին ստեղծագործությունները քաղաքական բնույթ ունեին, որը պատճառ դարձավ «I'Indicatore Genovese» և «I'Indicatore Livornese» ամսագրերի փակման համար:

Չբավարարվելով գրական-հրապարակախոսական գործունեությամբ՝ Ջ. Մացցինին 1827թ. սկզբին, մինչ համալսարանն ավարտելը, անդամագրվեց Ջենովայի կարբոնարների գաղտնի ընկերություններից մեկին: Կարբոնարների ընկերությանն անդամագրվելը բազմաթիվ ընդհանրություններ ուներ մասոնության արարողակարգերի հետ[3]: Ջ. Մացցինին դժգոհ էր, որ հանդիսավոր պայմաններում, վենտայում ձեռնադրվելու ժամանակ, իրեն չբացահայտեցին, թե ինչի՞ համար պետք է պայքարեն՝ հանուն հանրապետության, թե՞ միապետության, հանուն միասնական Իտալիայի, թե՞ իտալական պետությունների դաշնության: Չնայած այդ հարցերի պատասխանը նա չուներ, բայց, ի դեմս կարբոնարների, տեսնում էր հայրենիքի անկախության համար պայքարի ընդունակ մարդկանց[4]:

«Մշակի» պատմելով՝ 1830թ. կարբոնարների գաղտնի ընկերությունը Ջ. Մացցինիին գործուղեց Տոսկանայի դքսություն՝ նոր անդամներ հավաքագրելու համար: Վերադառնալով Ջենովա՝ նա իր ընկերներից մեկի մատնությամբ ձերբակալվեց, դատապարտվեց և բանտարկվեց Սավոնա բերդում[5]: «Մշակը» ճիշտ է ներկայացնում 1830թ. նոյեմբերին մատնությամբ Ջ. Մացցինի ձերբակալվելն ու բանտարկվելը: Սավոնայի բանտից նա դիմեց իր գործընկերներից Պասսանոյին՝ խնդրելով իրեն տրամադրել այն կարբոնարների անունները, որոնց հետ ինքը կարող է նամակագրություն հաստատել: Դրա համար հարկ եղավ խախտել մասոնության գործող արարողակարգերը, Ջ. Մացցինիին ձեռնադրել մասոն, շնորհել բարձր աստիճան, որպեսզի նա կարողանա իրեն ներկայացրած կարբոնարների հետ նամակագրություն վարել:

«Մշակի» պատմելով՝ բանտարկության մեջ հասկանալով կարբոնարների ընկերության թուլությունը՝ Ջ. Մացցինին կազմեց մի նոր գաղտնի ընկերության նախագիծ: Բանտարկությունից ազատվելով նա աքսորվեց հայրենիքից, գնաց Ֆրանսիա, որտեղ

---

[1] «Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3:

[2] Տե՛ս Канделоро Дж. История современной Италии. Пер. с ит., Москва, 1958, т. 2, с. 239.

[3] Տե՛ս Ambesi A. C. Storia della Massoneria. Milano, 1971, p. 257

[4] Տե՛ս Кирова К. Указ. соч., с. 9.

[5] «Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3:

Լիոն քաղաքում հրատարակեց իր «Ռիմինիի գիշերը» առաջին քաղաքական աշխատանքը: Այն վերաբերում էր 1831թ. Ռոմանիա գավառում տեղի ունեցած ապստամբությանը:

«Մշակն» իրավացի է. Սավոնայում բանտարկված Ջ. Մացցինիին 1831թ. հունվարի 9-ին իշխանություններն առաջարկեցին ընտրություն կատարել՝ աքսորվել Պիեմոնտի հեռավոր բնակավայրերից մեկը կամ լքել հայրենիքը: Ջ. Մացցինին աքսորում քաղաքական անգործության մատնվելուց խուսափելու համար նախընտրեց վտարանդվել և գնաց Ֆրանսիա: Լիոնում, Փարիզում և Կորսիկայում նա հանդիպեց իտալացի վտարանդիների, ֆրանսիական գաղտնի հանրապետական ընկերությունների անդամների հետ: 1831թ. գարնանը Ջ. Մացցինին տեղափոխվեց Մարսել, որտեղ ապաստան էին գտել ավելի քան 250 վտարանդի իտալացիներ:

«Մշակի» պատմելով՝ 1831թ. Ջ. Մացցինին Ֆրանսիայի Մարսել քաղաքում հիմնում է «Երիտասարդ Իտալիա» գաղտնի ընկերություն, որի «նպատակն էր ազատագրել իր հայրենիքը[1]»:

«Մշակը» ճիշտ է ներկայացնում Ջ. Մացցինիի հիմնած «Երիտասարդ Իտալիա» գաղտնի կազմակերպության նպատակը: Ջ. Մացցինիի մտահաղացմամբ՝ «Երիտասարդ Իտալիան» պետք է դառնար միասնական համաիտալական հեղափոխական կազմակերպություն և ժողովրդական ապստամբության ճանապարհով նպաստեր Իտալիայի միավորմանը: Նա վճռականորեն մերժում էր ինչպես բարեփոխումների կոչերը, այնպես էլ զինվորական դավադրության ճանապարհով հեղափոխությունները: Ջ. Մացցինիի կարծիքով պետք է այնպիսի հեղափոխություն տեղի ունենար, որն արմատապես կտարբերվեր մինչ այդ Ապենինյան թերակղզում տեղի ունեցած բոլոր հեղափոխություններից: Դրանք եղել են մասնակի ու դատապարտվել անհաջողության, քանի որ համազգային բնույթ չեն կրել: Նրա համոզմամբ՝ միայն համաիտալական հեղափոխության ճանապարհով կարելի է հասնել Իտալիայի ազգային անկախության, միասնության և հանրապետական կարգի հաստատմանը: Ջ. Մացցինիի մտահաղացմամբ՝ այդ նպատակով «Երիտասարդ Իտալիան» պետք է համախմբի ու իր անմիջական ենթակայության ներքո միավորի Իտալիայում գործող բոլոր գաղտնի ընկերությունները: Դրանց միավորումը հնարավորություն կտար հասնել «միասնական, ազատ, անկախ հանրապետական ազգի ձևավորմանը» և հայրենիքի իրական ազատությանը:

1831-1832թթ. Ջ. Մացցինին «Երիտասարդ Իտալիայի» համար կազմեց նոր ծրագիր, որը նախատեսում էր միավորել իտալական ազգային-ազատագրական շարժման մասնակիցների մեծամասնության գործողությունները: Ծրագրի հիմնական դրույթը հանդիսանում էր միասնական Իտալիայի ստեղծումը, որը կլուծեր ազգային շարժման մնացած բոլոր խնդիրները: Ջ. Մացցինին մշտապես ընդգծում էր այն միտքը, որ առանց երկրի միավորման հնարավոր չէ հասնել ո՛չ անկախության, և ո՛չ էլ ազատության, իսկ առանց միասնական Իտալիայի չի կարող գոյություն ունենալ ինքնուրույն և ազատ ազգ:

---

[1] Տե՛ս Кирова К. Указ. соч., с. 10-11; История Италии, т. 2, с. 124-125; История XIX века, т. 3, с. 511.

Ջ. Մացցինին գտնում էր, որ միավորված Իտալիան պետք է լինի միասնական, համազգային պետություն և մերժում էր միության ցանկացած այլ տարբերակ, լինի դա դաշնային պետություն, թե միապետություն: Միասնության և ազգային անկախության կարգախոսից բացի, «Երիտասարդ Իտալիայի» ծրագիրը նախատեսում էր հանրապետության հաստատում: Ջ. Մացցինին այն կարծիքին էր, որ իտալական ազատագրական շարժումը չի կարող հույսը դնել օտարերկրյա պետությունների, մասնավորապես՝ Ֆրանսիայի օգնության վրա: Ըստ նրա՝ Իտալիան պետք է ազատագրվի սեփական ուժերով, ընդսմին միայն ժողովրդի օգնության շնորհիվ:

«Երիտասարդ Իտալիայի» հիմնադրումից հետո Ջ. Մացցինին ձեռնամուխ եղավ քարոզչական լայն գործունեության ծավալմանը: Այդ նպատակով 1832թ. մարտին նա սկսեց Մարսելում հրատարակել և գաղտնի ճանապարհով իտալական պետություններ առաքել «Երիտասարդ Իտալիա» թերթը:

1833թ. գարնանը Պիեմոնտի իշխանությունները բացահայտեցին «Երիտասարդ Իտալիայի» դավադրությունը և ձերբակալեցին մոտ 70 մացցինիականների: 1834թ. Ջ. Մացցինին անհաջող փորձ արեց ապստամբություն բարձրացնել Սավոյայում: Նույն ճակատագրին արժանացավ նաև «Երիտասարդ Իտալիային» անդամագրված Ջուզեպպե Գարիբալդու ապստամբության փորձը Ջենովայում: Մացցինիական կազմակերպությունները բռնությունների ենթարկվեցին Լոմբարդո-Վենետիկյան մարզում՝ Տոսկանայում, իսկ 1836թ.՝ Հռոմում: Ջ. Մացցինին, հալածվելով ֆրանսիական և շվեյցարական իշխանությունների կողմից, 1837թ. հունվարին գնաց Անգլիա: 1840թ. նա հայտարարեց «Երիտասարդ Իտալիայի» վերականգնման մասին և վերսկսեց քարոզչական ու կազմակերպչական գործունեությունը: Լոնդոնում նա հիմնեց «Իտալական բանվորների միություն» և անվճար դպրոց՝ իտալացի բանվորների երեխաների համար, որտեղ սովորում էր 200-ից ավելի աշակերտ, իսկ ինքը դասավանդում էր[1]:

Անդրադառնալով վտարանդիությունում Ջ. Մացցինիի գործունեությանը՝ «Մշակը» փաստում էր, որ նա մի երկրից անցնում էր մյուսը և այնտեղից առաջնորդում էր «Իտալիայի մասնավոր ապստամբական շարժումները», հրապարակում էր քաղաքական բնույթի հոդվածներ, իսկ 1843թ. հիմնեց երկու պարբերական՝ «l'Apostolato popolare» «l'educatore» թերթերը: Բնութագրելով 1840-ական թվականների Ջ. Մացցինիի քաղաքական գործունեությունը՝ «Մշակը» գրում է. «Մի բան ուշադրության արժանի է, որ այդ մարդը միացնում է իր մեջ երկու ծայրահեղ ուղղություն, մի կողմից՝ հեղափոխական, որն իր նպատակին հասնելու համար ամբողջ հույսը դնում էր նոր սերնդի վրա, մյուս կողմից՝ վերացյալ կրոնական գաղափարներից տիրապետած տարրին էր դիմում իր հայրենիքին օգնության հասցնելու համար, նրա քաղաքական և բարոյական բարենորոգումների մեջ»[2]:

«Մշակը» 1840-ական թթ. Ջ. Մացցինիի հեղափոխական գործունեության մեջ ծայրահեղ հակասական դրսևորում է համարում հետևյալ իրողությունը: 1843թ. ամռանը «Երիտասարդ Իտալիայի» նախկին անդամ, «Իտալական լեգիոն» գաղտնի կազմակերպության ղեկավար Նիկոլա Ֆաբրիցին Մալթա կղզուց Ջ. Մացցինին տեղեկաց-

---

[1] Տե՛ս История Италии, т. 2, с.126-134; История XIX века, т. 3, с. 512-513; Кирова К. Указ. соч., с. 27-56.

[2] «Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3:

րեց, որ օգոստոսի 1-ին նախատեսում է Ռոմանիայում (Պապական պետություն) ապստամբություն բարձրացնել և առաջարկեց «Երիտասարդ Իտալիայի» անդամներով միանալ իրեն: Ջ. Մացցինին ապստամբության նախապատրաստության ժամկետը համարում էր չափազանց կարճ, ժամանակավրեպ, որը դատապարտված է անհաջողության: Նա Ն. Ֆաբրիցիին խնդրեց հետաձգել ապստամբությունը, բայց մերժում ստացավ ու չմիացավ ապստամբներին: Ընդամենը 80 զինված մարդկանցից կազմված մի ջոկատ Անտոնիո Մուրատորիի գլխավորությամբ ապստամբեց միայն Բոլոնիայում և ջախջախվեց:

1840թ. ավստրիական նավատորմի սպաներ Աթթիլո և էմիլիո Բանդիերա եղբայրները հիմնեցին հանրապետական ուղղվածության «Էսպերիա» գաղտնի ընկերություն: 1842թ. նրանք ընկերության գերագույն ղեկավար հռչակեցին Ջ. Մացցինիին և անդամագրվեցին «Երիտասարդ Իտալիա» կազմակերպությանը: 1844թ. հունիսին, Կալաբրիայում, նրանք Ջ. Մացցինիի անմիջական աջակցությամբ ապստամբեցին, բայց դավաճանաբար գերի ընկան ու հունիսի 25-ին մահապատժի ենթարկվեցին: Ջ. Մացցինին անձնական ողբերգություն էր համարում Բանդիերա եղբայրների կորուստը, ովքեր մահն ընդունեցին «Կեցցե Իտալիան» բացականչելով: Նա երիտասարդությանն ուղղված իր ուղերձում գրում էր. «Բանդիերա եղբայրները մեզ բոլորիս ցույց տվեցին, թե ինչպես պետք է մարդը ապրի ու մահանա իր համոզմունքների համար: Նրանք ամբողջ աշխարհին ապացուցեցին, որ իտալացիները կարողանում են մահանալ… որպեսզի Իտալիան լինի»:

«Մշակը» հեղափոխական Ջ. Մացցինիի մյուս ծայրահեղությունը համարում է այն, որ 1847թ. Հռոմի Պիուս IX պապին հղած նամակում «նրան հրավիրում էր հավատալ և իրագործել Իտալիայի միությունը»: Ուրեմն, եզրակացնում է թերթը, «Ջ. Մացցինիի պես ժողովրդավարական հանճարը կարողացավ խաբվել պապական աթոռի վրա նստած աբեղայից իր առաջին ժամանակներում ցույց տված ազատամտություններով և նրա խոստացած բարենորոգումներով[1]» :

«Մշակը» նկատի ունի 1847թ. սեպտեմբերի 8-ին Ջ. Մացցինիի բաց նամակը Պիուս IX պապին, որտեղ նրան կոչ էր անում գլխավորել Իտալիայի անկախության և ազատության համար շարժումը, դառնալ անկախության համար պայքարի հոգևոր առաջնորդ, «հռչակել առաջընթացի ու առաջադիմության նոր դարաշրջան[2]»: Դիմելով Հռոմի պապին՝ նա գրում էր. «Ներկայումս ո՛չ Իտալիայում, ո՛չ Եվրոպայում չկա Ձեզանից ավելի հզոր մարդ: Միավորեք Իտալիան, Ձեր հայրենիքը… Հայտարարեք՝ Իտալիան XIX դարում պետք է լինի միացյալ և դա բավական կլինի: Մենք կգործենք Ձեր անունից և Ձեզ համար… Չվախենաք ժողովրդի հրահրումներից: Ժողովուրդն այդպես վարվում է, երբ նրան չեն ղեկավարում»[3]:

«Մշակը» այդ նամակի համար հանդիմանում է Ջ. Մացցինիին, ում Ավստրիայի կանցլեր Կլեմենս Մետտեռնիխն անվանում էր «Եվրոպայի ամենաազդեցիկ հեղափոխականը»: Թերթը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ հեղափոխական Ջ. Մաց-

---

[1] «Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3:

[2] Scritti editi edinedit di Giuseppe Mazzini v. XXXVI. Imola: Galeati P., 1923, p. 225; История Италии, т. 2, с.160; Кирова К. Указ. соч., с. 70-71.

[3] Кирова К. Указ. соч., с. 70-71; История Италии, т. 2, с.160.

ցինին նպատակ էր հետապնդում օգտագործել այդ պահին չափազանց մեծ հանրաճանաչություն ձեռք բերած Պիուս IX-ի ազդեցությունն ու ուժը Իտալիայի միավորմանը հասնելու գործում[1]:

Այս հարցում Ջ.Մացցինին միակ հանրապետականը չէր, Ռիսորջիմենտոյի գործիչներից շատերն էին այդպես մտածում, անգամ Ջուզեպպե Գարիբալդին պատրաստ էր պայքարել Պիուս IX-ի գործի համար, «որպեսզի դառնա նրա ազատագրական առաքելության մասնակիցը»[2]: Պատճառը 1846-1847թթ. Պիուս IX պապի իրականացրած բարեփոխումներն էին, որի համար նա ձեռք էր բերել անբասիր հոգևորականի, սառնասիրտ քաղաքագետի, նախապաշարումներից ազատ մարդու ու լիբերալի համբավ: Կարճ ժամանակում Պիուս IX-ը այնքան ազդեցիկ դեմք դարձավ և այնպիսի հանրաճանաչություն ձեռք բերեց, որ Կ. Մետտեռնիխի կարծիքով՝ «նրա բարեփոխումները սկիզբ են դրել նոր դարաշրջանի[3]»:

Պիուս IX-ի համար Ջ. Մացցինիի առաջարկությունն անընդունելի էր, քանի որ չէր պատրաստվում պատերազմել Ավստրիայի դեմ և գլխավորել իտալացիների ազգային-ազատագրական պայքարը: Իրենից սպասվող ակնկալիքների կապակցությամբ նա դժգոհում էր, թե «Ինձնից ցանկանում են ինչ որ Նապոլեոն ստեղծել, այն դեպքում, երբ ես միայն աղքատ գյուղական քահանա եմ»:

Հռոմի պապի՝ «Իտալիայի ազատարար» և «փրկիչ» լինելու առասպելն առաջիններից մեկը հերքեց հանրապետական շարժման առաջնորդներից Կառլո Կատանեոն: 1853թ. նա պապի մասին գրում էր. «Պիուս IX-ի անունը հանկարծակի ծագեց ու արագորեն անհայտացավ՝ որպես ազգային միահամուռության խորհրդանիշ: Պիուս IX-ը առասպել էր, մտացածին, որպեսզի ժողովրդին ստիպեր հավատալ ինչ-որ ճշմարտության: Պիուս IX-ը բանաստեղծական կերպար էր, բայց այդ անվան հետ է կապվում Իտալիայի վերածնման համար շարժումը»[4]:

Ջ. Մացցինին նույնպես արագ հասկացավ, որ Իտալիայի միավորումը և կաթոլիկ եկեղեցու Քահանայապետի աշխարհիկ իշխանությունն անհամատեղելի են: «Մենք չենք ցանկանում ժխտել պապի բարի մտադրությունները,-գրում էր Ջ. Մացցինին , - Նա մտել է նոր ճանապարհ, բայց արդյո՞ք նրա ուժերը կբավարարեն այդ ճանապարհով առաջ գնալու համար»: Ըստ նրա՝ խոսքն ամենևին չի գնում ոչ առանձին բարեփոխումների և ոչ էլ Իտալիայի որևէ անկյունում ամեն ինչ լավ լինելու մասին: Իտալիան պետք է ազգային անկախության ու միասնության հասնի, իսկ դա պահանջում է «վերացնել պապի աշխարհիկ իշխանությունը»[5]:

1848թ. ֆրանսիական հեղափոխության հաղթանակից հետո, գրում է «Մշակը», Ջ. Մացցինին կազմում է «Իտալիայի ազատության համար մի ընկերություն՝ ազատության և ոչ հասարակապետության սկզբունքով[6]» Դեռևս 1846-1847թթ. Ջ. Մացցինին

---

[1] Տե՛ս King B. Storia dell'unita d'italia, v. 1, Roma, 1960, p. 245-247; Chisalberti A. M. Ancora sulla lettera di Mazzini a Pio IX. Scrittiin memoria di A. Giuffre. Milano, 1967, p. 535-546.

[2] Garbaldi G. Scritti editi e discorsi poitici e molitari. Ed. Nazionale, v.1, Bologna, 1964, p.83-84.

[3] Տե՛ս История XIX века, т. 5, с. 43.

[4] Տե՛ս Канделоро Дж. Католическое движение в Италии, Пер с ит., Москва, 1956, с. 87.

[5] Տե՛ս Кирова К. Указ. соч., с. 72.

[6] «Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3:

բազմիցս փորձեց վերստեղծել իր կազմակերպությունը՝ հետևողականորեն իր համախոհներին կոչ անելով «մեր սկզբունքներին հավատող» երիտասարդներին միավորել «մեկ շղթայի մեջ»: Նրա մտահաղացմամբ դա չէր լինելու «գաղտնի և բազմամարդ կազմակերպություն», այլ պետք է ձևավորվեր ազգային գործին նվիրյալ փոքրաթիվ երիտասարդներից: Յուրաքանչյուր քաղաքում երկու, երեք երիտասարդ՝ կապված միմյանց ու Ջ. Մացցինիի հետ, լայն քարոզչական գործունեություն էին ծավալելու երիտասարդության շրջանում: Բայց մինչ 1848թ. այդպիսի շղթա ձևավորել Ջ. Մացինիին չհաջողվեց[1]:

1848թ. մարտին իտալական պետություններում հեղափոխությունների հաղթանակը վերջնականապես ցրեց «լիբերալ պապի առասպելը»: Ազատագրական պայքարի ելած իտալացիների հույսն ու հավատը դարձավ Սարդինիայի թագավոր Կառլ Ալբերտը, ով 1820-ական թթ. որոշակի կապեր ուներ լիբերալների հետ: Կառլ Ալբերտը, ում հաճախ անվանում էին «տատանվող թագավոր»,«իտալական հեղափոխության Համլետ», հստակ գիտեր, թե ինչ է ցանկանում Ավստրիայի դեմ պատերազմում և ինչից է վախենում: Նա ցանկանում էր ընդլայնել իր թագավորության սահմանները, բայց միաժամանակ վախենում էր, որ ժողովրդական պատերազմը կարող է հանրապետական բնույթ կրել և իրեն զրկել գահից:

1848թ. մարտի 27-ին Կառլ Ալբերտն ազատագրական պատերազմ սկսեց Ավստրիայի դեմ և Ջ. Մացցինին հայրենիքին ծառայելու մղումով շտապեց վերադառնալ հայրենիք: 1848թ. ապրիլի 7-ին Միլանում նրան տեղի դեմոկրատները դիմավորեցին «կեցցե Մացցինին» վանկարկումներով ու նրա պատվին ցույց կազմակերպեցին: Միլանում Ջ. Մացցինին հիմնեց «L'Italia del popolo» թերթը և «Associazione nationale» ընկերությունը, որը նպատակ էր հետապնդում հասնել Լոմբարդիայի միավորմանը Սարդինական թագավորությանը: Հանուն հայրենիքի միավորման Ջ.Մացցինին պատրաստ էր հրաժարվել Իտալիան հանրապետություն հռչակելու գաղափարից: Այդ պատճառով նա 1847թ. ազգային շարժումը գլխավորելու առաջարկություն էր անում Հռոմի պապին, իսկ ազատագրական պատերազմի սկսվելուն պես պատրաստ էր համագործակցել նաև Կառլ Ալբերտի հետ, եթե թագավորը հայտարարի, որ «կհասնի ամբողջ Իտալիայի միավորմանը»[2] : Միլանի անկումից առաջ նա, որպես շարքային զինվոր, մտավ Ջ. Գարիբալդու ջոկատը, նրան ուղեկցեց մինչև Կոմո, այնուհետև իր կողմնակիցների հետ գնաց Շվեյցարիա: 1848թ. օգոստոսի 9-ի զինադադարից հետո նա Լուգանոյում գտնվող Ջ. Գարիբալդուն խոստացավ օգնել զենքով ու մարդկանցով, եթե պատերազմը վեսկսվի:

1849թ. փետրվարին Հռոմի Հանրապետության հռչակման լուրը ստանալուն պես Ջ. Մացցինին վերադարձավ Ֆլորենցիա, դարձավ Տոսկանայի ժամանակավոր կառավարության անդամ և փորձեց Տոսկանայի Հանրապետությունը միավորել Հռոմի Հանրապետության հետ: Անհաջողություն կրելով, մարտի 2-ին նա գնաց Հռոմ, ընտրվեց Սահմանադիր ժողովի անդամ, իսկ մարտի 29-ին Աուրելիո Սաֆֆիի ու Կառլո Արմել-

[1] Տե՛ս Кирова К. Указ. соч., с. 72.

[2] Гарибальди Дж.. Мемуары. Москва, 1966, с. 435.

լինիի հետ գլխավորեց եռապետությունը[1]: 1849թ. հունիսին Հռոմի հայրենասիրական ուժերը համառ դիմադրություն ցույց տվեցին քաղաքը շրջափակած ֆրանսիական զորքերին: Երբ դիմադրության բոլոր հնարավորությունները սպառվեցին՝ Հռոմի ասամբլեան Ջ. Մացցինիին առաջարկեց ֆրանսիական գեներալ Ն. Ուդինոյին հայտնել քաղաքը հանձնելու մասին: Նա մերժեց այդ առաջարկությունը և հրաժարական տվեց եռապետի պաշտոնից: Հուլիսի 3-ին Հռոմի անկումից հետո Ջ. Մացցինին կրկին լքեց հայրենիքն ու վտարանդվեց Շվեյցարիա: 1849թ. օգոստոսին նա գրում էր. «կյանքը վաղանցուկ է, վտարանդվելը դառը: Ես ինձ հետ տանում եմ վտարանդիություն մաքուր խիղճ, կատարած պարտքի գիտակցում[2]» : Տարիներ անց Ջ. Մացցինին այն կարծիքին էր, որ «Հռոմը հնարավոր չէր փրկել, այն դատապարտված էր կործանման: Մենք պետք է մտածեինք ապագայի մասին և Հռոմից ասեինք Իտալիային՝ մահվան գնացողը ողջունում է քեզ[3]» :

Անդրադառնալով Հռոմի Հանրապետության ղեկավարման գործում Ջ. Մացցինիի դերին՝ Ջ. Գարիբալդին հետագայում իր հուշերում Հռոմի անկման հարցում մատնանշում էր նրա թույլ տված սխալները: Ջ. Գարիբալդին գրում է, որ Ջ. Մացցինին սոսկ եռապետներից մեկը չէր, այլ փաստացի Հռոմի բռնապետը, ով ունենալով մեծ իշխանություն «չէր ցանկանում իր վրա պատասխանատվություն վերցնել»: Ջ. Գարիբալդու կարծիքով, եթե Ջ. Մացցինին «տիրապետեր գործնական հատկանիշների այն աստիճան, որքան պերճախոս էր, ծրագրեր էր կազմում և ապստամբություններ կազմակերպում, եթե կարողանար ականջալուր լիներ իր որոշ զինակիցների խորհուրդներին, որոնք ռազմական գործողություններ էին ղեկավարել, փորձ ունեին և ինչ որ բաներից գլուխ էին հանում, ապա կխուսափեր շատ սխալներից, որոնց մասին խոսք է գնում: Նա կարող էր, եթե չփրկեր Իտալիան, ապա գոնե հետաձգեր հռոմեական ողբերգության հանգուցալուծումը անորոշ երկար ժամանակով[4]» :

Իտալացի պատմաբան Անտոնիո Անցիլլոտտին համամիտ է Ջ. Գարիբալդու հետ, որ Ջ. Մացցինին, որպես եռապետ, վճռական չէր: Նրա կարծիքով իդեալիստ և երազող Ջ. Մացցինիին «թվում է, թե կորչում էր երազատեսության կիսախավարում, փոխանակ հստակ պատկերացում ունենար մարդկանց և գործերի մասին[5]» :

«Մշակի» գնահատմամբ՝ Ջ. Մացցինին մինչ «Իտալիայի միավորումը» նշանավոր դեր է խաղացել երկրի քաղաքական կյանքում, հայրենասիրական ուժերի համախմբման և հեղափոխական պայքարի ղեկավարման գործում: Նա «հեռվից առաջնորդում էր Իտալիայի ամեն հեղափոխական շարժում»: Թերթը դրանց թվում կարևորում է 1852թ. Մանտուայի, 1853թ. Միլանի և 1857թ. Ջենովայի ապստամբությունները[6]:

---

[1] История Италии, т. 2, с. 197-199; История XIX века, т. 5, с. 66, Революции 1848-1849. Под ред. Ф. В. Потемкина и А. И. Молока, т. 2, Москва, 1952 , с. 43; Кирова К. Указ. соч., с. 76-95.

[2] Кирова К. Указ. соч., с. 110-113.

[3] Революции 1848-1849, т. 2, с. 51.

[4] Гарибальди Дж. Мемуары, с. 183-184, 187-188

[5] Революции 1848-1849, т. 2, с. 48.

[6] Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3:

«Երիտասարդ Իտալիայի» ծրագրում չնայած դավադրական պայքարը մերժվում էր, բայց գործնականում Ջ. Մացցինին այդ քայլին հաճախ էր դիմում: Հռոմի անկումից հետո Ջ. Մացցինին պայքարը չդադարեցրեց: 1850թ. հոկտեմբերին նա Լոնդոնում հիմնեց «Իտալական ազգային կոմիտե», որը պետք է իրականացներ հայրենիքում գործող գաղտնի ընկերությունների գործունեությունը և շարունակեր պայքարը Իտալիայի անկախության ու ազատության համար: 1852թ. աշնանը Ջ. Մացցինին ապստամբություն նախապատրաստեց Հյուսիսային և Կենտրոնական Իտալիայում, որը պետք է սկսվեր Միլանում ու տարածվեր Պապական պետությունում և դքսություններում:

1853թ. փետրվարի 6-ին Միլանում սկսված ապստամբությունն ավստրիական զորքը դաժանորեն ճնշեց: 1857թ. հունիսին Երկու Սիցիլիաների թագավորությունում Կառլո Պիզականեի գլխավորած ապստամբությունը ճնշեց նեապոլիտանական զորքը: Նույն օրերին ճնշվեցին նաև Լիվորնոյում և Ջենովայում ապստամբությունների փորձերը, որոնք լուրջ հարված հասցրեցին Ջ. Մացցինիի հեղինակությանը: Միլանի ձախողված ապստամբության համար Ջ. Մացցինիին քննադատեց նրա համախոհներից Ջակոմո Մեդիչին, ով իր խմբով հեռացավ նրանից: 1854թ. Ջ.Գարիբալդին իտալական երիտասարդության և հայրենասերներին կոչ արեց չներքաշվել «ժամանակավրեպ ելույթներում, որոնք կործանում են և վարկաբեկում մեր գործը»[1] :

1857թ. օգոստոսին Լոնդոնում ստեղծվեց նոր կազմակերպություն՝ «Իտալական ազգային ընկերություն», որի ծրագիրը նախատեսում էր Իտալիան միավորել Սավոյան արքայատոհմի գլխավորությամբ: Ընկերության նախագահ դարձավ 1848-1849թթ. Վենետիկի հանրապետության ղեկավար Դանիելե Մանինը, իսկ նրա տեղակալ՝ Ջուզեպե Գարիբալդին:

1859թ. հունվարին Պիեմոնտի թագավորության վարչապետ Կամիլո Կավուրը Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ի հետ կնքեց գաղտնի համաձայնագիր, որով կողմերը պարտավորվում էին պատերազմ սկսել Ավստրիայի դեմ՝ Լոմբարդիան ազատագրելու նպատակով: Դրանով Իտալիայի միավորման գործը ստանձնեց 1859թ. Թուրինում «Իտալիայի Մեծ Արևելք» օթյակին անդամագրված Կ.Կավուրը: Իտալական Ռիսորջիմենտոյի գործիչներից շատերն էին մասոնական օթյակների անդամ, բայց հատկապես Կ. Կավուրի ու Ջ. Գարիբալդու նման մեծ մասոնների «շուրջ էր բևեռացված այդ ժամանակի Իտալիայի մասոնական կյանքը»[2] և Իտալիայի միավորման գաղափարը: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ «Մշակը» գրում է, որ Ջ. Մացցինիի «ազդեցությունը կարծես նվազում է, երբ 1859 և 1860 թվականներին Իտալիան Ֆրանսիայի օգնությամբ պատերազմ է սկսում ազատության համար»[3] :

1859թ. փետրվարի 21-ին Ջ. Մացցինին 151 հանրապետականների հետ մանիֆեստ ստորագրեց՝ ընդդեմ Վիտորիո Էմմանուելի և Նապոլեոն III-ի դաշինքի: Նա, ի հակադրություն Հյուսիս-իտալական թագավորություն ստեղծելու Վիտտորիո Էմմանուելի մտադրությանը, հանդես եկավ ամբողջ Իտալիան ազատագրելու համար ժողովրդական լայն շարժում ծավալելու օգտին: 1860թ. ամռանը, երբ Ջ. Գարիբալդին

[1] К. Кирова. Указ. соч., с. 118-121; История Италии, т. 2, с. 211-212, 218.
[2] Моромарко М. Указ. соч., с. 122.
[3] «Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3:

ազատագրեց Սիցիլիան, իսկ սեպտեմբերին՝ Նեապոլը, վտարանդիությունում տանջալից կյանքով ապրող Ջ. Մացցինին երջանկության հազվագյուտ պահ ապրեց: Նա փառք էր տալիս Աստծուն, որ «Իտալիան չի մարել» ու շարունակում է պայքարել: 1860թ. մայիսի սկզբին Ջ. Մացցինին Լոնդոնից գնաց Ջենովա՝ Ջ. Գարիբալդու մոտ: Սեպտեմբերի 17-ին Նեապոլում նա Ջ. Գարիբալդուն հորդորեց արշավել Հռոմի վրա: Ջ. Մացցինին մտադիր էր երեք հազար կամավոր հավաքագրել և միանալ Ջ. Գարիբալդու պայքարին, բայց չկարողացավ դրա համար անհրաժեշտ զենք, զինամթերք, պարեն ու ֆինանսներ ձեռք բերել: Ջ. Մացցինին հույսը դրել էր Միլանի ու Հռոմի պաշտպանության կազմակերպիչներից Ագոստինո Բերտանեի աջակցության վրա, բայց վարչապետ Կ. Կավուրը նրան հայտնեց, որ կառավարությունը դեմ է Կենտրոնական Իտալիա արշավանք կատարելուն և պատրաստ է ուժ կիրառելով խանգարել դրան:

1860թ. նոյեմբերի 9-ին Ջ. Գարիբալդին Նեապոլի բռնապետի իր լիազորությունները հանձնեց Վիտտորիո Էմանուելին ու գնաց Կապրերա, իսկ Ջ. Մացցինին կրկին գերադասեց վտարանդվել Լոնդոն: Նա չընդունեց թագավորի՝ իրեն շնորհած ներումը, քանի որ այն ընդունելու դեպքում պետք է բարեհաճ վերաբերմունք ունենար թագավորի իշխանության նկատմամբ[1]:

1862թ. Ջ. Մացցինին ողջունեց Հռոմն ազատագրելու Ջ. Գարիբալդու փորձը, թեպետ գտնում էր, որ Իտալիան միավորելու համար սկզբում անհրաժեշտ է ազատագրել ոչ թե Հռոմը, այլ՝ Վենետիկը: Ջ. Գարիբալդին հակված էր սկզբում ազատագրել Հռոմը:

1863թ. հունվարին լեհերն ապստամբեցին ռուսական տիրապետության դեմ և օգնության խնդրանքով դիմեցին Ջ. Մացցինիին: Նա լեհերին օգնելու մի արդյունավետ տարբերակ էր տեսնում՝ ապստամբություն բարձրացնել Վենետիկում և դրանով նպաստել ազատության համար համաեվրոպական պայքարի բռնկմանը: Վենետիկում ապստամբություն բարձրացնելու համար ֆինանսներ էին անհրաժեշտ, իսկ կուսակցության գանձարկղը դատարկ էր: Միայն 1864թ. աշնանը, երբ լեհերի ապստամբությունը ճնշվել էր, Ջ. Գարիբալդու «հազարյակի» արշավանքի մասնակից, հայրենասերների երկու ջոկատ Ջ. Մացցինիի մերձավոր զինակից էժիստո Բեցցի գլխավորությամբ պայքարի դրոշ բարձրացրեցին Վենետոյի լեռներում: Ապստամբության համար անհրաժեշտ զենքը, հանդերձանքը և գումարը հայթայթեց Ջ. Մացցինին: Շուրջ 150 հոգուց բաղկացած ջոկատները կառավարական զորքն առանց դժվարության ջախջախեց[2]:

«Մշակը» գրում է, որ մինչև 1866թ. Ջ. Մացցինին իր հայրենիքում դատապարտված էր մահապատժի: 1866թ. իտալական կառավարությունը նրան ներում շնորհեց և թույլատրեց հրատարակել 12 հատոր կազմող իր գրական ժառանգությունը[3]: Թերթն իրավացի է. 1866թ. հունիսին Իտալիան և Պրուսիան համատեղ պատերազմ սկսեցին Ավստրիայի դեմ: Ջ. Մացցինին 1866թ. ամառն անցկացրեց իտալա-շվեյցարական սահմանի մոտ, Լուգանոյում, որտեղ նախապատրաստություն էր տեսնում Վենետի-

[1] Кирова К. Е. Указ. соч., с. 141-146; Гарибальди Дж. Мемуары, с. 285.

[2] Տե՛ս Кирова К. Указ. соч., с. 152-154.

[3] «Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3

կում ապստամբելու համար: Պատերազմի ավարտից հետո, իտալական կառավարությունն ի պատիվ Վենետիկի ազատագրման, Ջ. Մացցինիին վերջապես ներում շնորհեց: Չնայած դրան՝ Ջ. Մացցինին չցանկացավ օգտվել 1866թ. համաներումից, թեև այդ ընթացքում մի քանի անգամ ընտրվել էր իտալական խորհրդարանի անդամ[1]:

1864թ. ապստամբության անհաջողությունից հետո Ջ. Մացցինին չհուսահատվեց ու շարունակեց իր գործը: «Երկաթե կամքի տեր» հեղափոխականը «մնաց անկոտրում նախատեսված նպատակին հասնելու գործում[2]» : Նա ձեռնամուխ եղավ նոր արշավանքի նախապատրաստմանը: Այդ կապակցությամբ Ա. Ի. Գերցենը գրում է. «Մացցինին, կորցնելով այսօր բարեկամներին, դրամ, հազիվ փրկվելով շղթաներից, կախաղանից, վաղը դառնում է հետևողական, համառ, հավաքում է նոր գումար, փնտրում է նոր ուժեր, նորից նետվում է մարտի և, նորից ջախջախված, կրկին գործի է անցնում ջղաձգային կրքոտությամբ: Այդ աննկուն հաստատակամության, այդ անխոնջ գործունեության մեջ ինչ-որ մեծ, կամ եթե կուզեք, ինչ-որ խելահեղություն կա[3]»

«Այդ ժամանակից սկսած,- նկատում է, «Մշակը», - Ջ. Մացցինին կարծես հետ է քաշվում քաղաքական գործունեությունից և այլևս չի հետևում Եվրոպայի հեղափոխական շարժմանը: Նա կարծես իր լռությամբ հայտնում է, որ իր դերն ավարտվեց: Նա կարծես, այլևս չէր հասկանում վերջին ժամանակի Եվրոպայի շարժումը»:

Իրականում Ջ. Մացցինին քաղաքական գործունեությունից չհեռացավ, չհաշտվեց ստեղծված իրողության հետ և շարունակեց իր պայքարը: 1866թ. աշնանը Ջ. Մացցինին փորձեց Հռոմն ազատագրելու նպատակով կամավորների արշավանք կազմակերպել, բայց հաջողության չհասավ: Դրանից հետո նա հանգեց այն հետևության, որ Հռոմը կարելի է ազատագրել, եթե այնտեղ ապստամբություն բարձրանա: Միշտ միանձնյա որոշումներ կայացնող Ջ. Մացցինին խորհրդի համար դիմեց իտալական դեմոկրատների երևելի դեմքերին: Նրանցից Ջ. Գարիբալդին նրան պատասխանեց, որ ցավոք ինքը ներկայումս «պատրանքներ է կառուցում երկրի տրամադրությունների մասին», որն, անշուշտ, մի օր կկռվի, «բայց հիմա չի կարող համապատասխանել Ձեր պահանջներին»[4] :

Ջ. Գարիբալդին թեպետ Հռոմի ազատագրումն այդ պահին համարում էր ժամանակավրեպ, բայց 1867թ. հոկտեմբերին փախավ Կապրերա կղզում թագավորական նավատորմի հսկողությունից և 8 հազար կամավորներով կրկին արշավեց Հռոմի վրա: Պիուս IX պապին օգնության հասած ֆրանսիական զորքը նոյեմբերի 3-ին Մենտանայի տակ պարտության մատնեց Ջ. Գարիբալդուն: Ջ. Մացցինին Ջ. Գարիբալդուն հղած նամակում գրում էր, որ ինքը չէր հավատում նրա հաջողությանը Մենտանայում և համոզված էր, որ ճիշտ կլիներ ամբողջ ուժերը հավաքել Հռոմում ապստամբելու համար, բայց քանի որ նա արդեն սկսել էր արշավանքը, ինքն աջակցեց ինչով կարող էր[5]:

1870թ. օգոստոսին տեղեկանալով Սիցիլիայում նախապատրաստվող ապստամբության մասին՝ Ջ. Մացցինին շտապեց այնտեղ, բայց Նեապոլում ձերբակալվեց և եր-

---

[1] Кирова К. Указ. соч., с. 156-157:

[2] Степняк С. Джузеппв Гарибальди. Биографический очерк, СПб, 1906, с. 27

[3] Герцен А.И. Сочинение. Москва, 1952, т. 10, с. 69.

[4] Տե՛ս Кирова К. Указ. соч., с. 158.

[5] Տե՛ս Гарибальди Дж. Мемуары, с. 339; Кирова К. Указ. соч., с. 158, История Италии, т. 2, с. 250.

կու ամսով բանտարկվեց Սավոնայի բանտում: Հոկտեմբերին նրան ներում շնորհվեց, բայց Ջ. Մացցինին նորից դրանից հրաժարվեց ու լքեց Իտալիան:

«Մշակը» գրում է, որ մահվանից մոտ մեկ տարի առաջ Ջ. Մացցինին «հրապարակայնորեն հերքեց իր համակրությունը դեպի Ինտերնացիոնալ աշխատողների ընկերությունը»[1]: Թերթն իրավացի է. Ջ. Մացցինին ողջունեց 1864թ. սեպտեմբերի 28-ին Լոնդոնում հիմնված Առաջին ինտերնացիոնալը, որում տեսնում էր 1834թ. իր ստեղծած «Երիտասարդ Եվրոպա» միջեվրոպական միության «բանվորական տարատեսակը»: Նա փորձեց իր համախոհներով վերցնել Ինտերնացիոնալի ղեկավարությունը, որը չստացվեց: 1865թ. մացցինականները դուրս եկան Ինտերնացիոնալի գլխավոր խորհրդի կազմից գաղափարական տարաձայնությունների պատճառով: 1871թ. գարնանը Ջ. Մացցինին դադարեցրեց համագործակցությունն Ինտերնացիոնալի հետ[2]:

«Մշակը» գրում է, որ 1872թ. մարտի 10-ին, երբ Իտալիայի խորհրդարանում ստացվեց Ջ. Մացցինիի մահվան լուրը, տարբեր կուսակցություններ ներկայացնող պատգամավորները «միավորվեցին մի զգացմունքի մեջ և հասարակական երևելի մարդու մահվան պատճառով հայտարարեցին իրենց սրտի խոր ցավակցությունը»[3]: Թերթի պատմելով՝ Ջ. Մացցինիի հուղարկավորման ժամանակ նրա դագաղի հետևից քայլում էր 12 հազար մարդ, մեծ մասամբ՝ ուսանողներ, գավառների և քաղաքների պատգամավորներ, աշխատավորների ընկերություններ և «ֆրան-մասոն կոչվող ընկերության ներկայացուցիչներ»[4] :

Ջ. Մացցինիի հուղարկավորությունը Ջենովայում, իսկապես զանգվածային ու աննախադեպ էր, որին մասնակցում էր 100 հազար մարդ, այդ թվում՝ բազմաթիվ մասոններ: Բարձրաստիճան մասոն Ջուզեպպե Մացցինին «Իտալիայի Մեծ Արևելք» օթյակի Մեծ Վարպետն էր[5], միաժամանակ բավարական իլյումինատների գաղտնի ընկերության ղեկավարը՝ ընկերության հիմնադիր ղեկավար Ադամ Վայսհաուպտի մահից հետո[6]:«Մշակի» պատմելով՝ Ջ. Մացցինիի հուղարկավորության օրը նրա պատվին Հռոմի փողոցներում թույլատրեցին մասոնական դրոշներ կախել:

«Մշակը» հետագայում գրում է, որ 1875թ. մարտի 10-ին՝ «մեծ իտալացի ազգասերի մահվան տարեդարձի օրը», Հռոմի Կապիտոլիումի թանգարանի դահլիճներից մեկում տեղադրվեց Ջ. Մացցինի արձանը[7], իսկ 1882թ. հունիսի 10-ին Ջենովայում

---

[1] «Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3:

[2] Кирова К. Указ. соч., с. 165-168.

[3] «Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3:

[4] «Մշակ», 1872, 30 մարտի, № 13, էջ 3

[5] Տե՛ս William R. Denslow, Harry S. Truman: 10.000 Famous Freemasons from K to Z, Part Two. Kessiger Publishing. Морамарко М. Указ. соч., с. 121; Ридли Джаспер. Фримасоны, Пер. с фр., Москва, 2007, с. 256; Соловоев О.Ф. Масонство далекое и близкое. «Новая и новейшая история», Москва, 1992, N4, с. 76; Карпачев С. П. Масоны. Словарь. Москва, 2008, с. 246.

[6] Տե՛ս Гоголицин Ю. М. Тайные общество в истории человечества, или кто правит миров. Ростов-на-Дону, 2010, с. 139.

[7] «Մշակ», 1875, 27 մարտի, № 12, էջ 4:

կատարվեց նրա արձանի բացման հանդեսը[1]: Թերթն իրավացի է. Ջ. Մացցինիի արձանը բացվեց Ջենովայի արվարձան Ստալենոյի հանրահայտ գերեզմանատանը: Սպիտակ մարմարից պատրաստված հուշարձանում Ջ. Մացցինին պատկերված է բարձր սյան վրա, որի պատվանդանի աստիճաններին նստած է «սքացող Իտալիան», իսկ նրա մոտ՝ «Dio e popolo» նշանաբանով դրոշը պարզած մի պատանի:

Եզրակացություն

Բավական հավաստի ներկայացնելով Ջ. Մացցինիի քաղաքական գործունեությունը և գնահատելով նրա դերը իտալական ազգային-ազատագրական պայքարում՝ «Մշակը» շեշտում է, որ «իր ստեղծագործություններով և գործունեությամբ նա չկարողացավ հաստատել Իտալիայի միությունը»: Բայց դա ամենևին չի նսեմացնում նրա արժանիքները: Թերթի խորին համոզմամբ՝ «անկարելի է հերքել այն մեծ ազդեցությունը, որ նա ունեցավ, հարուցելով իր հայրենիքի մեջ ազգասիրական զգացմունքը և գրգռեց երիտասարդությունը դեպի զոհաբերությունները»[2] :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Берти Д. Россия и итальянские государства в период Рисорджименто. Пер. с ит, Москва, 1959.
2. Гарибальди Дж.. Мемуары. Москва, 1966.
3. Герцен А.И. Сочинение. Москва, т. 10, 1952.
4. Гоголицин Ю. М. Тайные общество в истории человечества, или кто правит миров. Ростов-на-Дону, 2010.
5. История XIX века. Под ред. Лависса и Рамбо. Пер. с. фр., Москва, т. 3, 1938.
6. История Италии. Под ред. Мизиано К. Ф. Москва, 1970.
7. Канделоро Дж. История современной Италии. Пер. с ит., Москва, 1958.
8. Канделоро Дж. Католическое движение в Италии, Пер с ит., Москва, 1956
9. Карпачев С. П. Масоны. Словарь. Москва, 2008.
10. Кирова К.Э. Жизнь Джузеппе Мадзини. Москва, 1981.
11. Ковальская М. Движение карбонариев в Италии. Москва, 1977.
12. Морамарко М. Масонство в прошлом и настоящем. Пер. с ит., Москва, 1990.
13. Революции 1848-1849. Под ред. Ф. В. Потемкина и А. И. Молока, т. 2, Москва, 1952.
14. Ридли Джаспер. Фримасоны, Пер. с фр., Москва, 2007.
15. Соловоев О.Ф. Масонство далекое и близкое. «Новая и новейшая история», Москва, 1992, N4.
16. Степняк С. Джузеппе Гарибальди. Биографический очерк, СПб, 1906.
17. Ambesi A. C. Storia della Massoneria. Milano, 1971.
18. Chisalberti A. M. Ancora sulla lettera di Mazzini a Pio IX. Scrittiin memoria di A. Giuffre. Milano, 1967.

[1] «Մշակ», 1882, 23 հունիսի, № 111, էջ 3:

[2] Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 3:

19. Garbaldi G. Scritti editi e discorsi poitici e molitari. Ed. Nazionale, v.1, Bologna, 1964.
20. King B. Storia dell'unita d'italia, v. 1, Roma, 1960.
21. Scritti editi edinedit di Giuseppe Mazzini v. XXXVI. Imola: Galeati P., 1923.
22. William R. Denslow, Harry S. Truman: 10.000 Famous Freemasons from K to Z, Part Two. Kessiger Publishing.
23. «Մշակ», 1872, 29 հունիսի № 25:
24. «Մշակ», 1872, 16 մարտի, № 11:
25. «Մշակ», 1872, 23 մարտի, № 12:
26. «Մշակ», 1872, 30 մարտի, № 13:
27. «Մշակ», 1875, 27 մարտի, № 12:
28. «Մշակ», 1882, 23 հունիսի, № 111:
29. «Մշակ», 1882, 24 հունիսի № 112 :

REFERENCES

1. Berti D. Rossiya I italyanskie gosydarstva v period Risordjmento. Per. s. it., Moskva, 1959.
2. Garibaldi Dj. Memyari. Moskva, 1966. (in Russian)
3. Gercen A. I. Sochinenie. Moskva, t. 10, 1952. (in Russian)
4. Gogolicin Yu. M. Taynie obshestvo v istorii chelovechestva, ili kto pravit mirov. Rostov-na-Dony, 2010. (in Russian)
5. Istoriya XIX veka. Pod red. Lavissa I Rambo. Per.s. fr., Moskva, t. 3, 1938. (in Russian)
6. Istoriya italii. Pod red. Miziano K. F. Moskva, 1970. (in Russian)
7. Kandeloro Dj. Istoriya sovremenmoi Italii. Per. s it., Moskva, 1958. (in Russian)
8. Kandeloro Dj. Katolicheskoe v Italii. Per. s it., Moskva, 1956. (in Russian)
9. Karpachev S. P. Masoni. Slovar. Moskva, 2008. (in Russian)
10. Kirova K. E. Jizn DJyzeppe Madzini. Moskva, 1981. (in Russian)
11. Kovalskaya M. Dvijenie karbonarie v Italii, Moskva, 1977. (in Russian)
12. Moramarko M. Masonstvo v proshlom I nastoyashem.Per. s. it., Moskva, 1990. (in Russian)
13. Revolyucii 1848-1849. Pod red. F. V. Potemkina I A. I. Moloka, t. 2, Moskva, 1952. (in Russian)
14. Ridli Djasper. Frimasoni. Per. s fr., Moskva, 2007. (in Russian)
15. Solovoev O. F. Masonstvo dalekoe I blizkoe. «Novaya I noveishiya istoriya», Moskva, 1992, N4. (in Russian)
16. Stepnyak S. Djuzepe Garibaldi. Biograficheskii ocherk, SPb, 1906.
17. Ambesi A. C. Storia della Massoneria. Milano, 1971. (in Russian)
18. Chisalberti A. M. Ancora sulla lettera di Mazzini a Pio IX. Scrittiin memoria di A. Giuffre. Milano, 1967. (in Russian)
19. Garbaldi G. Scritti editi e discorsi poitici e molitari. Ed. Nazionale, v.1, Bologna, 1964. (in Russian)
20. King B. Storia dell'unita d'italia, v. 1, Roma, 1960. (in Russian)

21. Scritti editi edinedit di Giuseppe Mazzini v. XXXVI. Imola: Galeati P., 1923. (in Russian)
22. William R. Denslow, Harry S. Truman: 10.000 Famous Freemasons from K to Z, Part Two. Kessiger Publishing. (in Russian)
23. «Mshak», 1872, 29 hunisi, № 25. (in Russian)
24. «Mshak», 1872, 16 marti, № 11. (in Russian)
25. «Mshak», 1872, 23 marti, № 12. (in Russian)
26. «Mshak», 1872, 30 marti, № 3. (in Russian)
27. «Mshak», 1875, 27 marti, № 12. (in Russian)
28. «Mshak», 1882, 23 hunisi, № 111. (in Russian)
29. «Mshak», 1882, 24 hunisi, № 112. (in Russian)

РЕЗЮМЕ

Оценка освободительной борьбы Джузеппе Мадзини в газете «Мшак» («Труженик»)

Мовсисян Феликс
Доктор исторических наук, профессор
Заведующий кафедрой истории ВГУ,
Ванадзор, Республика Армения

Одной из самых выдающихся личностей итальянского Рисорджименто был политический деятель, публицист, писатель, философ и подлинный патриот – Джузеппе Мадзини.

Он горячо любил свою родину, борьбе за независимость и свободу которой посвятил всю свою сознательную жизнь. Дж. Мадзини с юных лет стал членом итальянского национально-освободительного движения и привнес не только новые идеи, но и мощный духовный потенциал и многообразие. Он на собственном примере показал свою безграничную преданность родине, во имя объединения которой готов был на самые большие жертвы. Благодаря этим качествам, убежденный республиканец Дж. Мадзини для своих соотечественников стал благороднейшим олицетворением национальных чувств. Программы Дж. Мадзини по освобождению родины политическими средствами претерпевали изменения и подвергались неудачам, тем не менее он продолжал с самозабвенной преданностью вести борьбу во имя достижения своей цели. На эти качества политического деятеля Дж. Мадзини в свое время обратила внимание газета «Мшак» («Труженик»), находящаяся в авангарде восточноармянского либерального течения. Основатель и редактор этого периодического издания – провозвестник и лидер армянского либерализма Григор Арцруни – считал Дж. Мадзини видным республиканцем, народным гением, настоящим патриотом, энергичным политическим деятелем, человеком, преданным своим убеждениям. По его мнению, тайная организация «Молодая Италия», основанная Дж. Мадзини, составила программу по освобождению родины и ценой многочисленных жертв, трудностей и неудач до конца боролась за объединение Италии.

С точки зрения газеты «Мшак» («Труженик»), Дж. Мадзини своими произведениями и несокрушимой волей хотя непосредственно и не достиг объединения Италии, но его деятельность и его борьба не прошли бесследно. По убеждению газеты, невозможно отрицать

то большое влияние, которое оказал Дж. Мадзини, пробудив в молодежи патриотические чувства и самопожертвенность.

Ключевые слова: Италия, Рисорджименто, Дж. Мадзини, карбонарий, «Молодая Италия», освобождение, борьба, родина, объединение.

SUMMARY

Giuseppe Mazzini's Assessment of the Liberation Struggle in the Mshak Newspaper

Movsisyan Feliks

VSU, Head of the Chair of History,
Ph.D, in History, Professor
Vanadzor, Armenia

One of the prominent figures of the Italian Risorgimento is rightfully considered Giuseppe Mazzini, a politician, publicist, writer, philosopher and a great patriot. He dearly loved his Motherland, for whose independence and freedom he dedicated his whole life. Joining the Italian national-liberation movement from a young age, Mazzini brought with him not only new ideas, powerful spiritual qualities and diversity. By personal example he showed his boundless devotion to the Motherland, for the unification of which he was ready to make the greatest sacrifice. Those characteristics made the convinced republican J. Mazzini the noblest embodiment of national sentiments in the eyes of his compatriots. Although Mazzini's plans to liberate the homeland had changed and failed several times, he continued to fight for his goal with unwavering dedication.

These qualities of J. Mazzini as a politician were noticed and revealed by the newspaper Mshak, the leader of the liberal movement in Eastern Armenia. The founder editor of the periodical, a spokesman and pioneer of the time of Armenian freedom, Grigor Artsruni considers J. Mazzini an outstanding republican, a popular genius, a great patriot, an energetic politician, a man devoted to his convictions. In his opinion the secret organization "Young Italy" founded by Mazzini made a plan for the liberation of the Motherland and at the cost of many sacrifices, difficulties and failures fought to the end for the unification of Italy.

According to the description of the Mshak, though Mazzini did not directly achieve the unification of Italy with his works and unfailing dedication, his work and struggle did not remain without consequences. The newspaper believes that it is impossible to deny the great influence J. Mazzini had to arouse the feeling of patriotism in his homeland and incite the youth to sacrifice.

Key words: Italy, Risorgimento, J. Mazzini, Carbonari, "Young Italy", liberation, struggle, homeland, unification